| | |
|---|---|
| Փրփրահեղուկ | ПО-6ЦТ կամ համարժեք փրփրահեղուկը (200-300լ պոլիէթիլային կամ պոլիմերային տարաներով) միատար է առանց նստվածքի և շերտավորման: Խտությունը 20$^0$C ջերմաստիճանի դեպքում 1000-1200կգ/մ$^3$: Կինեմատիկական մածուցիկությունը 20$^0$C ջերմաստիճանի դեպքում ոչ ավել 100 մմ$^2$/վրկ: Սառեցման(թանձրացման) ջերմաստիճանը ոչ բարձր -8$^0$ C:<br>6% ծավալային մասնաչափով աշխատանքային լուծույթի փրփուրի պատիկությունը.<br>- ցածր պատիկությունը, ոչ ավել 20,<br>-միջին պատիկությունը, ոչ պակաս 60,<br>-բարձր պատիկությունը, ոչ պակաս 500:<br>6% ծավալային մասնաչափով աշխատանքային լուծույթից ստացված միջին պատիկության փրփուրով 0.032+/-0.002 դմ$^3$/մ$^2$վրկ ինտենսիվության մատուցման դեպքում H-հեպտանի (ԳՕՍՏ Ռ 51105-ով բենզին, մակնիշը նորմալ 80) հրդեհի հանգցման ժամանակը, ոչ ավել 100 վրկ:Պահպանման երաշխիքը թողարկման օրվանից առնվազն 36 ամիս: Մատակարարումը՝ արտադրության օրվանից ոչ ուշ քան երեք ամիս:<br>Համապատասխանում է ՏՈՒ 0258-148-05744685-98 փոփոխ.1-4: |
| Կրակմարիչ ԱՉ-2 (ОУ-2)<br>(ածխաթթվային) | ԱԿ-2 կրակմարիչը համապատասխանում է ԳՕՍՏ Ռ 51057-2001 կամ ՏՊ 4854-003-61192961-2010 պահանջներին:<br>- լցավորված կրակմարիչի քաշը ոչ ավել 7,5 կգ,<br>- լիցքը ոչ պակաս 2.0 կգ,<br>-տարողությունը ոչ պակաս 2.7 լիտր,<br>- աշխատանքի ժամանակահատվածը ոչ պակաս 8 վայրկյան,<br>- շթի երկարությունը՝ ոչ պակաս 2 մ,<br>- նախատեսվում է 21B դասի և հոսանքի մինչև 1000Վ լարման տակ գտնվող ագրեգատների հրդեհամարման համար,<br>- երաշխիքային ժամկետը՝ լիցքի համար 1տարի, իսկ իրանի համար 5 տարի,<br>- կրակմարիչը օգտագործվում է -40$^o$C ից +50$^o$C,<br>- բարձրությունը 510+/-30 մմ, իսկ տրամագիծը՝ 108 +/-20 մմ: |
| Կրակմարիչ ԿՓ-2 (ОП-2)<br>(փոշիով) | ԿՓ-2(զ) տեսակի կրակմարիչը համապատասխանում է ԳՕՍՏ Ռ 51057-2001 կամ ՏՊ 4854-001-61192961-2010 պահանջներին:<br>Այն նախատեսված է A, B, C, E (մինչև 1000Վ) դասի հրդեհների մարման համար:<br>-լիցքավորված փոշու կշիռը 2+/-0.1 կգ,<br>-աշխատանքային ճնշումը կրակմարիչի իրանի մեջ 1,2-1,6 ՄՊա<br>-շթի հեռավորությունը աշխատանքի ժամանակ ոչ պակաս 2 մ,<br>- հրդեհամարման միջոցի դուրս մղման տևողությունը – սկսելուց՝ ոչ պակաս 6 վրկ,<br>-մոդելային օջախի հրդեհամարման հնարավորությունը B դասի դեպքում պետք է լինի 21B, իսկ A դասի դեպքում 0.7A,<br>-իրանի երաշխիքային ժամկետը ոչ պակաս 5տարի,<br>-լիցքավորված կրակմարիչի կշիռը 3+/-0,200 կգ,<br>-կրակմարիչը շահագործվում է -40$^o$C ից +50$^o$C ջերմաստիճանի պայմաններում:<br>Չափսերը - տրամագիծը՝ 110 +/- 20 մմ: |